



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ
ԸՆԴՈՒՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«22» 07 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔԵՆԱЦԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔԵՆԱՍԻԹՅԱՆ

ԲՓ 000062

Զեռնարկողը՝

«ԳԼՈՍՍԱ» ԱԿ

Ք. Երևան, Մաշտոցի 51/30

Գործունեությունը՝

**Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի կառուցման
նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայփ
Վայոց ձորի մարզ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնոյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՑՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000062

<22> 07 2019թ.

**Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի
կառուցման նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«ԳԼՈՒՄԱ» ԱԿ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

Վայոց ձորի մարզ ք. Եղեգնաձոր

Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի կառուցումն իրականացվելու է <<Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի>> շրջանակներում (ԴՍԱԲԾ)՝ Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ: Ծրագրի իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը /ՀՏՀՀ/: Ծրագիրը համահունչ է <<կառավարության <<Ալեւտների ոհսկերի նվազեցման ազգային ռազմավարության>> նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը: Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է Վայոց Ձորի մարզկենտրոն՝ Եղեգնաձոր քաղաքում:

2017թ. ապրիլի 13-ին Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի կառուցման նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի նախարարության կողմից տրվել է ԲՓ-35 պետական փորձաքննական դրական եզրակացություն: Դպրոցի կառուցման հողային աշխատանքների ընթացքում տարածքում հայտնաբերվել են հնագույն կառուցների հետքեր, ինչի պատճառով դպրոցի շինարարական աշխատանքները դադարեցվել են և իրականացվել են հնագիտական պեղումներ: Պեղումների արդյունքում տարածքում հայտնաբերվել է 12-14 դդ. հուշարձան՝ հնձան (գինու արտադրամաս), որի պահպանման նպատակով դպրոցի շենքը նախատեսվել է տեղափոխել 8մ հարավ-արևմտյան ուղղությամբ՝ գործող դպրոցին պատկանող մարզահրապարակի տարածք: Գոյություն ունեցող դպրոցի շենքը պահպանվելու է:

Տեղանքի ինժեներակրաքանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար: Սեյսմիկ բնութագրի համաձայն՝ տարածքի համար սպասվող առավելագույն հորիզոնական արագացումները գտնվում են 0.3g տիրուցիում, համապատասխանում են երրորդ սեյսմիկ կարգին, տարածքն ունի 9 բալ սեյսմիկ ոհսկայունության աստիճան: Կառուցապատվող տարածքը քիչ թեքությամբ հայտ



բնութագրվում է քարքարոտ ավազային հողածածկով և խնջնաբերաբար աճող խոտածածկով:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի տարածքում, որտեղ ձեռնարկատիրական որևէ գործունեություն չի իրականացվում: Ընդհանուր հողատարածքի մակերեսը կազմում է 2.705 հա, որից կառուցապատման ենթակա տարածքի մակերեսը 0.2760 հա է:

Դպրոցը նախագծված է 450 աշակերտի համար: Այն բաղկացած է դեֆորմացիոն կարաներով անջատված ու ներքին տարածքներով իրար միացված 5 մասնաշենքերից, այդ թվում՝ տարրական և ուսումնական մասնաշենքեր /որտեղ տեղադրված են դասասենյակները և լաբորատորիաները/ վարչական մասնաշենք, սպորտի և հանդիսությունների մասնաշենք: Տարրական մասնաշենքը նախագծված է երկհարկանի, իսկ ուսումնականը՝ եռհարկանի: Տարրական մասնաշենքը տեղակայվելու է գոյություն ունեցող դպրոցի և գլխավոր փողոցի հարևանությամբ: Եռահարկ վարչական մասնաշենքը բաղկացած է վարչական սենյակներից, գրադարանից, ճաշարահից, ուսումնագիտության, համակարգչային, նկարչության և շախմատի դասասենյակներից: Թիվ «4» և «5» մասնաշենքերը դահլիճային են, որից թիվ «4-ը» հանդիսությունների դահլիճ է, իսկ թիվ «5-ը» մարզադահլիճ է, որը տեղադրվելու է նոր բացօթյա մարզահրապարակին մոտ: Բոլոր մասնաշենքերն ունեն առանձին աստիճանավանդակներ՝ իրենց արտաքին մուտքերով: Դպրոցն ապահովված է նաև տեղաշարժության խնդիրներ ունեցող մարդկանց մատչելիության հասանելիության պայմաններով:

Դպրոցի տանիքը նախատեսված է լանջավոր՝ արտաքին ջրահեռացմամբ և ջերմամեկուսացմամբ: Արտաքին պատերը և վերնածածկը ևս ջերմամեկուսացվելու են:

Համաձայն աշխատանքային նախագծի՝ մոտեցումը դպրոցին կիրականացվի երկու հիմնական մուտքերից, որոնցից գլխավորը նախատեսված է համալիրի միջին հատվածում, երկրորդը՝ գոյություն ունեցող դպրոցի շենքի կողմից:

Դպրոցի տարածքում, մասնաշենքերի ողջ պարագծով նախատեսված է նոր սալվածք (բրեկզա տիպի ծածկով), տարածքի նոր ցանկապատ, ասֆալտե ծածկովթով նոր ուսումնամարզական խաղահրապարակ: Բարեկարգման աշխատանքները ներառում են՝ նոր մետաղական ցանկապատի տեղադրում (263 գմ), ասֆալտապատում (2688.5քմ) և մայթերի ստեղծում (572 գմ): Եզրազարդերի իրականացմամբ: Դպրոցը կունենա 806.75 ք.մ մակերեսով ասֆալտապատ բացօթյա մարզահրապարակ: Նախագծված դպրոցի տարածքում կան պտղատու ծառեր և դեկորատիվ տնկիներ, որոնցից շինարարության հետևանքով ազդեցության կենթարկվեն խնձորենիները (48 ծառ): Դպրոցի տարածքի ձախակողմյան հատվածում՝ դպրոցի տարածքի թեք լանջի վրա նախատեսվում է իրականացնել խնձորենիների վերատնկում:

Դպրոցի բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար ջեռուցման աղբյուր կիանդիսանա տարածքում կառուցվող կաթսայատունը: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել 2 կաթսաներ՝ յուրաքանչյուրը 250կվտ ջերմային հզորությամբ (ջերմության ընդհանուր հաշվարկային ծախսը՝ Q=360500 կկալ/ժամ): Կաթսաները համալրված կլինեն ավտոմատ կառավարման այրիչներով: Շենքի արտաքին պատերի և վերևի ծածկի կոնստրուկցիաների ջերմամեկուսացման արդյունքում ջեռուցման ծախսը կնվազեցվի շուրջ 40%-ով: Կաթսայատան աշխատանքից առաջացած ծխագագերի հեռացումն իրականացվելու է՝ 400մմ տրամագծով և 9.0մ բարձրությամբ ծխնելուցից մեջոցով: Օդափոխությունը նախատեսված է իրականացնել՝ ներածող արտածող ինդիկատոր փոխանակային, բնական և արհեստական համակարգերով:



Դպրոցն ապահովված է լինելու տաք և սաղը ջրամատակարարմամբ, կոյուղու ջրահեռացման ցանցով և հակահրդեհային սնուցող ցանցով: Դպրոցի ջրամատակարարումն ինչպես նախկինում, իրականացվելու է գոյություն ունեցող քաղաքային ջրագծից: Տաք ջրամատակարարումը՝ 2200 լ/օր ծախսով, նախատեսված է իրականացնել արևային մարտկոցների միջոցով: Այդ նպատակի համար դպրոցի տանիքում նախատեսվում է տեղադրել 8 հատ արևային, պանելային մարտկոցներ, յուրաքանչյուրը՝ 3 կվտ հզորությամբ: Այն օրերին, եթե արևային ջրատաքացուցիչները չեն հասցնի տաքացնել ջուրը, լրացուցիչ տաքացումը ջրատաքացուցիչներում կապահովվի էլեկտրոնային սարքերով, որոնց միջոցով կկարգավորվի արևային ջրատաքացուցիչների փոխարինումը էլեկտրական ջրատաքացուցիչներով կամ հակառակը:

Նախնական գնահատման հայտում վերլուծվել է նախագծվող դպրոցի շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունները և մշակվել են բնապահպանական միջոցառումներ:

Շինարարության տևողությունը կազմի 22 ամիս: Շինարարական աշխատանքների ընթացքում տեղանքում բացված հուշարձանի պահպանման համար կիրականացվի տարածքի ժամանակավոր սահմանազատման միջոցառումներ: Շինհրապարակի կազմակերպումը, շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, ինչպես նաև շարժական տնակի տեղադրումը կազմակերպվելու է բացառապես դպրոցի տարածքի ներսում, որը կառանձնացվի համապատասխան ցանկապատով: Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի շինհրապարակի տարածք կապահովվի գոյություն ունեցող մոտեցման երկրորդային ճանապարհով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ծեռնարկություններից, կամ գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարական աշխատանքների ընթացքում հողային աշխատանքների ընդհանուր հանույթը կազմի 8998 մ³, որից ավելացված 4 տ մնացորդային հողային զանգվածը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում՝ հատուկ հատկացված տարածքում, որտեղից տեղական ինքնակառավարման մարմնի հետ համաձայնեցված պարբերաբար կտեղափոխվի եղեգնաձորի քաղաքային աղբավայր: Մնացած հանույթը կօգտագործվի հետիցքի նպատակով: Հողային աշխատանքների ընթացքում ազդեցության ենթակա բուսահողը (448.4 մ³ ծավալով) ծածկող պաստառներով, 2 մ-ը չգերազանցող կույտերի ծևով նախատեսված է պահել շինարարական հրապարակի տարածքում: Հետագայում, բուսահողի նշված զանգվածը կօգտագործվի դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքներում:

Շինարարության փոփի համար հաշվարկվել է հողային աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու արտանետումները /որը կազմի՝ 0.28 գ/վրկ, կամ 0.44 տ/շին.ժամանակահատված/, որի քանակները թույլատրելի նորմերի սահմաններում պահելու նպատակով նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ: Փոշու արտանետումները նվազեցնելու համար նախատեսվել է շինհրապարակի պարբերաբար ջրանում, շինանյութ տեղափոխող մեքենաների տեղաշարժ՝ թափքի ծածկման պայմաններում, շինհրապարակ մուտք գործող և դուրս մեքենաների անվադողների լվացում:

Շինաշխատանքների համար պահանջվող 0.1 լ/վրկ ջրի ծախսը նախատեսվում է վերցնել տարածքում առկա ջրագծից: Ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրանումնան, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառու աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:



Հինարարության ընթացքում շինհրապարակից շինարարական հոսքաջրերի հեռացման համար նախատեսված է կառուցել ժամանակավոր առվակներ, իսկ շահագործման փուլում դպրոցի տարածքից մակերևութային ջրերը կարող են հեռացվել ինքնահու եղանակով՝ բնական թեքություններով։ Որպես բնական սելավատար կծառայի մոտակա տարածքում առկա ծորակը։

Հինարարական աշխատանքների ընթացքում հեղուկ վառելիքի մնացորդային քանակները, քայլուղերը նախատեսվում է պահել անթափանց փակ տարաներում, հետագայում, որպես երկրորդային նյութ կրկնակի կօգտագործվեն այլ աշխատանքներում։

Հայտում վերլուծվել են նաև շինարարության ընթացքում աղմուկի, թրթումների, երթևեկության ծանրաբեռնվածության հնարավոր ազդեցությունները շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա և վերջիններից խուսափելու նպատակով բնապահպանական կառավարման պլանում (ԲԿԴ) նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ։ Հնարավոր սոցիալական ազդեցությունները բացառելու համար նախատեսվել են աշխատանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ և այլն։

Ենթաձրագրի շրջանակում տարածքի բարեկարգման աշխատանքները ներառում են կանաչապատ գոտիների ստեղծում /որոնք հետագայում կհամալրվեն գեղազարդ բուսատեսակներով/, որտեղ 146 ք.մ մակերեսում կցանվի բազմամյա խոտարույսեր։ Հաշվի առնելով ազդեցության ենթակա ծառերի տարիքը (2-3 տարեկան), 48 հատ ծառերի վերատնկման աշխատանքները նախատեսվում են իրականացնել հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ դպրոցի տնօրինության, համայնքի և շինարար կապալառուի համատեղ մասնակցությամբ։ Համաձայն Եղեգնաձոր համայնքի ղեկավարի կողմից 21.06.2019թ. տրված թիվ 415 գրության, վերատնկման աշխատանքների համար նախատեսվել է դպրոցի տարածքի թեք լանջը։

Հայտում ներկայացվել է նաև 2018թ.-ին <<Հնագիտության և ազգագրության ինստիտուտի>> կողմից դպրոցի տարածքում իրականացված հնագիտական պեղումների վերաբերյալ հաշվետվությունը և հայտնաբերված հուշարձանի հատակագիծը։ ԲԿԴ-ի համապատասխան բաժնում հուշարձանի պահպանության նպատակով և նախատեսվել են միջոցառումներ։

Ծրագրի պատվիրատուի՝ CSZC-ի կողմից, կանոնավոր մոնիթորինգի միջոցով ստուգվելու է միջոցառումների կատարման արդյունավետությունը, ներառյա՛ տարածքում առկա ծառերի և թփերի աճման և կպչողականության մշտադիտարկման/վերահսկման իրականացումը։

Ենթաձրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը գնահատվել է 103 190 <<դրամ, որն ընդգրկում է նաև՝ շինարարական աղբի հեռացման, կանաչապատման, ինչպես նաև ծառերի վերատնկման աշխատանքների ծախսերը, որոնք ներառված են դպրոցի նախագծի ծավալաթերթերում։

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, <<օրենսդրությամբ սահմանված կարգով Եղեգնաձոր համայնքում անցկացված հանրային ընարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացնելու համարության։ Փորձաքննական գործընթացին մասնակցել է նաև կրթության, գիտության ազգային և սպորտի նախարարությունը։

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական աշխատանքների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության հումանիտար մաս-



արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կիխնեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմացվել շինարար կապալառուի կողմից գործունեության ընթացքում բնապահպանական մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

- Դպրոցի կառուցման հետագա հողային աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ՊՄՀՊ գործակալության՝ Վայոց ձորի և Սյունիքի տարածքային բաժնի աշխատակցի ներկայությունը և հնագիտական շերտ հայտնաբերելու դեպքում դիմել հնագետին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳԼՈՄՄԱ» ԱԿ կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի կառուցման փոփոխված աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետն

Հ. Մկրտչյան

